Կազմվել է 11.08.2021թ.

Տպագրված է 2 օրինակից

Օրինակ _____

ԸՆԴՈՒՆՎԵԼ Է

«ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԴԻՐ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՈՐՈՇՄԱՄԲ
/արձանագրություն թիվ 02/

«Միացյալ Հայաստան» կուսակցության
կառավարման խորհրդի նախագահ
Երվանդ Յուրիկի Թարվերդյան

_____

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ

«_____»_____2021թ.

Գրանցման համար _____

ՀՎՀՀ _____

Պետական ռեգիստրի գործակալության
աշխատակից

_____

«ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

Ծ Ր Ա Գ Ի Ր

Երևան 2021թ.

«Միացյալ Հայաստան» կուսակցության ծրագիրը հինգհազարամյա հայոց պետության, պետականության պահպանման, զարգացման և հզորացման համազգային ծրագիր է:

Ազգային պետության ոլորտային ծրագրերի զարգացումը ենթադրում է հայ ազգի և հայկական պետության զարգացում, որը դարավոր ավանդական արժեքների համադրում է՝ ժամանակակից քաղաքակիրթ աշխարհի նվաճումների հետ:

Պետք է բարեկամ լինել բոլոր այն պետությունների հետ, որոնք աջակցում են հայոց պետության զարգացմանը և ամենաանհաշտ պայքարը մղել այն պետությունների դեմ, որոնք բարեկամության և քաղաքակրթության քողի ներքո փորձում են ջլատել ազգային որակները՝ փոխարենն առաջարկելով աշխարհաքաղաքացի լինելու ապազգային, հակամարդկային և անմարդկային կեղծ կատեգորիաները:

Երկրի գործունեության ներքոշարադրյալ ոլորտների զարգացման սկզբունքները ենթադրում են ժամանակակից զարգացած աշխարհի բարձրագույն որակների և նվաճումների ներդրում Հայաստանում՝ զուգահեռաբար պահպանելով հայ ժողովրդի բազմահազարամյա փորձի և աշխարհասփյուռ հայության ամենաբազմաֆունկցիոնալ, մինչ այժմ ամենաչնչին մասով հայրենիքում կիրառված և աշխարհում գրեթե անմրցակից բազում փորձություններով անցած զորությունները:

«Միացյալ Հայաստան» կուսակցության նպատակն է Սահմանադրությամբ, «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով, «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով /այսուհետ՝ օրենք/ և այլ օրենքներով՝ ժողովրդավարական ընտրությունների միջոցով ապահովել իր ներկայացվածությունը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում՝ մասնակցելով պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորմանը, պետական քաղաքականության մշակմանն ու իրականացմանը:

«Միացյալ Հայաստան» կուսակցությունն ամեն ջանք կգործադրի ազգային ժողովում հայկական սփյուռքին մինչև 20% ներկայացուցչություն ապահովելու համար: Այդ քայլով հնարավոր կլինի Հայաստանն օրենքի ուժով դարձնել աշխարհի բոլոր երկրներում ապրող հայության կենտրոնը:

Տնտեսություն.

Կայուն տնտեսություն, հզոր պետություն: Տնտեսական հզորությունը՝ որպես պետության բոլոր ոլորտների հիմք: Որոշակի ճյուղերի պետականացում, որոշ ճյուղերում պետական մասնակցություն:

Պետական համակարգ.

Պետական կառավարման մտածողության փոփոխություն, «իշխել» հասկացության վերացում, փոխարինում կառավարման նոր բանաձևով՝ չկա ավելորդ մարդ, կա սխալ կամ ճիշտ կառավարում:

Դատական համակարգ.

Դատական համակարգի ապաքաղաքականացում և անկախացում: Դատական իշխանության որոշումների վրա օրենսդիր կամ գործադիր իշխանությունների ներգործման բացառում: Բողոքարկված դատական որոշումների խիստ վերլուծում:

Բանակ.

Բանակը՝ որպես պետության անվտանգության երաշխավոր: Այն պետք է դառնա գաղափարախոսական մաս: Բանակի արդիականացում՝ նոր տեխնոլոգիաներով, կապի միջոցներով, կիբերանվտանգության երաշխիքներով, ժամանակակից ռազմական տեխնիկայով:

Արտաքին քաղաքականություն.

Հայասփյուռ երկրներին՝ առանձնակի ուշադրություն: Արտաքին քաղաքականության իրագործում՝ բացառապես փոխշահավետ համագործակցության սկզբունքներով:

Գիտություն եվ կրթություն.

Գիտության զարգացումը՝ որպես պետության գերխնդիր: Պետությունը՝ գիտական արտադրանքի գնորդ և պատվիրատու՝ այն տնտեսության տարբեր ոլորտներում կիրառելու նպատակով: Մարդը և նրա միտքը՝ որպես Հայաստանի գերագույն ռեսուրս: Կրթված և դաստիարակված մարդը՝ որպես պետության կարևորագույն բաղկացուցիչ: Նախադպրոցական կրթության դերի գերակայություն: Մանկավարժի մասնագիտության գերարժևորում, նրանց սոցիալական խնդրիների համալիր լուծում:

Մշակույթ.

Մշակույթը՝ Հայաստանի ռազմավարական արժեք. արժեք ոչ միայն հայության, այլև ողջ մարդկության համար: Այդ առումով «փոքր երկիր» դիտվող Հայաստանի պատմությունն ավելի խորը ու մեծ ծավալներ ունի, քան նոր երկրների 250-ամյա պատմությունը: Ինչպես բանակը, այդպես էլ մշակույթը պետք է առաջատար դերում գտնվի պետության կազմակերպման և կառավարման գործում:

Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցի.

Հայ Առաքելական եկեղեցու դերի ուժեղացում, զորացում հայ մարդու սրտում: Հայաստանյայց Եկեղեցին եղել և մնում է վերջին 2000 տարիների հայության պատմության կրողը, վկան, մշակույթի պահապանը, ռազմական պաշտպանը, ուսումնագիտական կենտրոնը և ներկայումս հանդիսանում է ամբողջ աշխարհում սփռված հայության փոքր ու մեծ բոլոր համայնքների հոգևոր, կրթական և ազգային կենտրոնը:

Սփյուռք.

Սփյուռքի հետ նոր քաղաքականության ձևավորում: Սփյուռքի նախարարության վերականգման անհրաժեշտություն: Սփյուռքի հետ համագործակցության նոր ճանապարհային քարտեզ՝ ներդրումների արդյունավետ ձևաչափ:

Տուրիզմ.

Հայաստանը՝ որպես տուրիստական կենտրոն: Տուրիզմի բազմատեսակության ապահովում:

Տուրիստական ենթակառուցվածքների զարգացման համար ներդրումային պայմանների ստեղծում:

Սպորտ.

Սպորտի՝ որպես մարդու կամային դաստիարակության, ֆիզիկական առողջության և մարդկային բարոյական արժեքների ձևավորման համակարգի կարևորում: Մարզական օջախներին հարկային արտոնությունների տրամադրում: Թիմային սպորտաձևերի զարգացման խրախուսում, պետական աջակցություն:

Տրանսպորտ.

Հայկական ազգային ավիացիայի ստեղծման առաջնահերթություն: Ռազմավարական ճանապարհների ստեղծում: Ներքին ճանապարհների վերանորոգում: Փոխադարձ շահերից ելնելով՝ միջազգային ուղիների ապաշրջափակում: Հայկական երկաթուղու աշխատանքների կանոնավորում:

Ընտանիք եվ մարդ.

Հասարակության մեջ մարդու նշանակության ընդգծում, նրա դերի կարևորության բարձրացում: Մարդու ազատության ապահովում՝ անարխիայի տարրերի բացառում: Մարդկանց զբաղվածության ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացում, սոցիալական հարցերի լուծում: Ընտանեկան ազգային արժեքների վերականգնմանն ուղղված գործի կազմակերպում: Աշխատանքի իրավունքի պաշտպանություն՝ արհմիությունների դերի ուժեղացում: Մարդու ինքնասիրության վիրավորանքի համար խիստ պատիժների սահմանում: Ծննդաբերության աճի, ծնելիության խթանմանն առանձնակի խրախուսում: Հատուկ մոտեցում միայնակ մայրերին:

Առողջապահություն.

Բուժաշխատողների սոցիալական և իրավական ապահովության ներդրում: Մայրաքաղաքային և մարզային բուժսպասարկման համահարթեցում: Օրենսդրական դաշտի մանրակրկիտ վերլուծում և բարելավում: Ախտորոշման համակարգերի մատչելիության ապահովում: